



Մայիսի 27-ին, առավոտից Թբիլիսիի Սուրբ Գեորգ եկեղեցին եւ նրա մերձակա տարածքը բուրում էր անուշահոտ վարդով, շնչում էր սայաթնովյան մեղմահունչ երգ ու երաժշտությամբ: Վերստին Վարդատուն էր, վերստին Սայաթ-Նովան ու նրա երգն էր իշխում ամենուր: Եվ առանձնահատուկ էր այս Վարդատունը, քանզի այն նվիրված էր Սայաթ-Նովա մեծ աշուղի ծննդյան 300-ամյակին, որը տոնվում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի մեծ հովանու ներքո:

Միջոցառումը կազմակերպել էին Կրաստանում ՀՀ դեսպանությունը, Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու Վիրահայոց Թեմը՝ Կրաստանի նախագահի աշխատակազմի, Թբիլիսիի քաղաքապետարանի, Կրաստանի եւ ՀՀ մշակույթի նախարարությունների աջակցությամբ: Այս տարվա Վարդատունը չէր սահմանափակվել միայն Թբիլիսիով եւ

